




**ԳՈՒՐԳԷՆ ԵԱՆԻԳԵԱՆԻ ԱՐԱՐՔԻՆ
ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՅ- ԹՐԶԱԿԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ**

**(ԸՍՏ «ԶԱՐԹՕՆՔ» ԵՒ «ԱՐԱՐԱՏ» ՕՐԱԹԵՐԹԵՐՈՒՆ,
1973-1995)**

(Վերանայուած)

**Պատրաստեց
ՅՈՎՍԷՓ ԱՐԹԻՆԵԱՆ**

Բ. հրատարակութիւն

**Հեղինակային հրատարակութիւն
Երեւան
2016**

ԳՈՒՐԳԷՆ ԵԱՆԻԳԵԱՆԻ ԱՐԱՐՔԻՆ
ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՅ-ԹՐԶԱԿԱՆ
ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

(ԸՍՏ «ԶԱՐԹՕՆՔ» ԵՒ «ԱՐԱՐԱՏ» ՕՐԱԹԵՐԹԵՐՈՒՆ,
1973-1995)

(Վերանայուած)

Պատրաստեց
ՅՈՎՍԷՓ ԱՐԹԻՆԵԱՆ

Հեղինակային հրատարակութիւն
Երեւան
2016

ՀՏԴ 94 (479.25)

ԳՄԴ 63.3 (53)

Ա 868

Արթինեան Յովսէփ

Ա - 868 Գուրգէն Եանիգեանի Արարքին Արձագանգներու Եւ Հայ-Թրքական Հակամարտութեան Մասին Հրապարակումներու Մատենագիտութիւն (Ըստ «Չարթօնք» Եւ «Արարատ» Օրաթերթերուն, 1973-1995) (Վերանայուած): Յ. Արթինեան.- Եր.: Հեղինակային հրատարակութիւն, 2016.- 226 էջ:

Գիրքին մէջ տեղ գտած են հայկական ազատագրական շարժման գործիչ, հերոս Գուրգէն Եանիգեանի արարքին արձագանգներն ու հայ-թրքական հակամարտութեան վերաբերեալ Պէյրութի «Չարթօնք» եւ «Արարատ» օրաթերթերուն մէջ լոյս տեսած հրապարակումները 1973-1995 ժամանակաշրջանին:

Գիրքը աղբիւրագիտական օգտակար ուղեցոյց մըն է պատմաբաններուն, Հայ Դատի հոլովոյթն ու հայ-թրքական դարաւոր հակամարտութիւնը ուսումնասիրողներուն համար:

ՀՏԴ 94 (479.25)
ԳՄԴ 63.3 (53)

ISBN 978-9939-0-1812-6

© Արթինեան Յովսէփ, 2016 թ.

Գեորգ Աճեմեանի եւ Սարհատ Սարհատեանի յիշատակին, որոնք
այս գիրքին նիւթին մասին շատ բան գիտէին, բայց իրենց հետ տարին:
Հանգիստ իրենց ոսկորներուն:

Յ. Ա.

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ա՛գգ,

Կռուէ՛ ամբողջութեամբը քու միսերուդ:

Եթէ միսերդ ինկան պատառ-պատառ՝

կռուէ՛ դնդերներո՛վդ, ջիղերո՛վդ, երակներո՛վդ:

Եթէ պայքարը զանոնք լափեց՝ կռուէ՛ ոսկորներո՛վդ:

Եթէ ոսկորներդ փշրուեցան՝ կռուէ՛ ծուծո՛վդ:

Եթէ ծուծ չմնաց՝ կռուէ՛ աճիւններո՛վդ:

Եթէ ասոնք ալ տարտղնուեցան, կորսուեցան, չքացան,
այն ատեն կռուէ՛, ա՛գգ, Հերոսո՛վդ:

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

(«Թերթիս Կիրակօրեայ Թիւը», տպ. «Սեւան», Պէյրուք, 1958, էջ 9)

ՄՈՒՏՔ

27 Յունուար 1973ին Ամերիկայի Միացեալ Նահանգներու Գալիֆորնիոյ Նահանգի Սանթա Պարպարա քաղաքին մէկ պանդոկին մէջ, Հայոց Յեղասպանութենէն ճողոպրած կարնեցի 77-ամեայ ծերունի Գուրգէն Եանիգեանը սպաննեց երկու թուրք դիւանագետներ, իբր վրեժ 1915ին թուրքերու կողմէ իր գերդաստանին բնաջնջման:

Սոյն արարքը ցնցիչ ազդեցութիւն ունեցաւ հայ, թուրք եւ համաշխարհային հանրային կարծիքին վրայ: Այս պատճառով սկսաւ աճիլ հետաքրքրութիւնը հայերու, Հայաստանի եւ Հայ Դատի նկատմամբ:

Թէ ինչպիսի զարգացումներ տեղի ունեցան անկէ ետք՝ ներհայկական եւ արտաքին գետիներու վրայ, քիչ թէ շատ ծանօթ է դէպքին ժամանակակիցներուն: Այդ գծով մանրամասնեալ տեղեկութիւններ այսօր կարելի է գտնել մամուլին մէջ:

Նկատի ունենալով, որ այդ եւ անոր յաջորդող ժամանակաշրջանին զարգացումները կարելոր են՝ մեր ազգային կեանքին վրայ ձգած իրենց հետքերով, նպատակայարմար գտայ անոնց մատենագիտա-ժամանակագրական ցուցակի մը պատրաստութիւնը՝ իբր վաւերագրութիւն այդ ժամանակաշրջանի զարգացումներուն, «Չարթօնք» եւ «Արարատ» օրաթերթերուն ընդմէջէն: Այդ ուղղութեամբ եզրակացութիւններ հանելու փորձ չեմ ըրած, այդ մէկը ձգելով անաչառ պատմաբաններուն, փորձած եմ առարկայականօրէն ներկայացնել փաստերը միայն:

Կը փափաքէի այս աշխատանքի նիւթին առնչութեամբ, նոյն ժամանակաշրջանի զարգացումներուն արտացոլումներուն մատենագիտական ժամանակագրութիւնը կատարել նաեւ «Ազդակ» օրաթերթէն, սակայն նկատի ունենալով վերջինիս այդ շրջանի հաւաքածոյին կրկնակի ըլլալը՝ նախորդ երկուքին միասնական ծաւալէն, այդ մէկը իմ կարողութենէս վեր էր ժամանակային եւ աշխատանքային-առողջական առումով (տեսողութեան հարցեր ունենալուս պատճառով): Կը յուսամ եւ կը մաղթեմ, որ այդ բացը կը փակուի Գուրգէն Եանիգեանի արարքին զարգացումները բացայայտելու նպատակն ունեցող այլ նուիրեալի մը/նուիրեալներու կողմէ:

Այս ցուցակին մէջ երեւցող անստորագիր լրատուութիւններէն բացի՝ առանց հեղինակի նիւթերը «Արարատ» եւ մասամբ «Չարթօնք» օրաթերթի պարագային թրջական մամուլէն արտատպումներ են, իսկ անհրաժեշտութեան պարագային փակագիծերու մէջ տրուած են ամփոփ բացատրութիւններ: Ցուցակին մէջ երեւցող նիւթերուն վերնագիրները պահուած են այնպէս՝ ինչպէս որ լոյս տեսած են երկու օրաթերթերուն մէջ. զանոնք ներկայացուցած եմ չակերտներու մէջ: Նկատի ունենալով, որ Գուրգէն Եանիգեանի մականունը (ազգանունը) երեք ձեւերով լոյս տեսած է մամուլին մէջ՝ գ, կ եւ ք-ով, արտատպումներու պարագային նոյնութեամբ ձգած եմ: Ուրիշ անուններու, մասնաւորաբար՝ թրջական թերթերու պարագային, կատարած եմ միօրինականացումներ: Կեղծանուններու պարագային, փակագիծերու մէջ, տուած եմ անոնց տերերուն իսկական անունները (անոնք որոնք հասու

եղած են ինծի), ինչպես նաեւ, նոյնպես փակագիծերու մէջ, լրացուցած եմ որոշ անուններու առաջին բաղադրիչները: Կատարած եմ նաեւ կետադրական աննշան, բայց անհրաժեշտ ուղղումներ կամ յաւելումներ:

Մատենագիտա-ժամանակագրական այս ցուցակը մինչեւ 1995 հասցուցած եմ այն նկատառումով, որ այդ տարին անկախ Հայաստանի մէջ տեղի ունեցաւ Հայոց Ցեղասպանութեան նուիրուած միջազգային գիտաժողով մը՝ Հայաստանի նախագահին գլխաւորութեամբ, որ պետականօրէն Հայոց Ցեղասպանութեան ճանաչման աշխատանքին ստանձնումն էր: Միեւնոյն ատեն Սփիւռքի տարածքին՝ Գուրգէն Եանիգեանի արարքին հետեւանքներուն անմիջական գործունեութիւնը արդէն իր հետքը ձգած էր:

Այս աշխատանքին պատրաստութեան մէջ իրենց ունեցած օգտակարութեան համար, շնորհակալութիւն կը յայտնեմ «Չարթօնք» եւ «Արարատ» օրաթերթերու խմբագրութեանց, Հայկազեան Համալսարանի «Տէրեան» Հայագիտական Գրադարանի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մատենադարանի պատասխանատուներուն, ինչպես նաեւ մօտիկ բարեկամներու, որոնք համեստօրէն փափաքեցան, որ իրենց անունները չյիշատակեմ աշխատասիրութեան հրապարակման պարագային:

Յ. Ա.



ԳՈՒՐԳԵՆ ԵԱՆՒԳԵԱՆ
(1895-1984)

ԳՈՒՐԳԵՆ ԵԱՆԻԿԵԱՆ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ

Գուրգեն Եանիկեան ծնած է Կարին (Էրզրում), 1895ի Մարտ 22ին:

Հազիվ վեց ամսուայ երեխայ, տեղի կ'ունենայ Արեւմտեան Հայաստանի պատմական մեծ ջարդը, որուն զոհ կ'երթան աւելի քան 300 000 անմեղ հայեր:

Գուրգենի հայրը սերտ յարաբերութիւն ուներ Կարինի պարսկական հիւպատոսին հետ: Ասկէ օգտուելով, իրենց ընտանիքն ու 28 հարազատներ պարսկական հիւպատոսարան կ'ապաստանին: Երկու շաբաթ հոն ապահով մնալէ յետոյ, հիւպատոսին կարգադրութեամբ, լեռնային գաղտնի ճամբաներով կը հասնին Կարսի (ռուսական սահմանի) մօտ Զեօթահ գիւղը:

Հոն կը տեսնեն թէ փոքրիկ Գուրգենը չկայ: Յոգնութեան եւ սառնամանիքի ազդեցութեան տակ անզգայ դարձած մօր գիրկէն ան սահած եւ ինկած էր ճամբան:

Հետապնդումի եւ մահանալու սարսափին տակ գտնուողներուն բոլուն արգելքին հակառակ, մայրը եւ Յակոբ եղբայրը յանձն կ'առնեն ամէն գնով վերադառնալ քալելով՝ գտնելու եւ ազատելու համար փոքրիկը:

Անտեսելով անխուսափելի մահը, մայրն ու Յակոբը ետ կը դառնան սահմանէն, հետեւելով սահնակի հետքերուն, որոնք ծածկուած էին ձիւնէն եւ փոթորիկէն:

Աւելի քան չորս մղոն քալելէ յետոյ, կը գտնեն մանուկ Գուրգենը, գրեթէ անկենդան վիճակի մէջ: Մայր եւ որդի իրենց մարմիններուն տաքութեամբ վերակենդանացնելէ ետք սառած երեխան, կը վերադառնան սահմանագլուխ, ուր խումբը անհամբեր կը սպասէր տխուր կամ ուրախ լուրին:

Կը հասնին Կարս: Հայրը իրեն հետ բերած գումարով, կարճ ատենէն դարձեալ կը հասնի նախանձելի վիճակի մը:

Կարինի պարսկական հիւպատոսին կողմէ յանձնարարականով մը, հայրը մօտ յարաբերութիւն եւ բարեկամութիւն կը հաստատէ Կարսի հիւպատոսին հետ:

Կարճ ատեն ետք, քաղաքական տուեալներու հեռանկարով, փոքրիկ Գուրգենը կը դառնայ պարսկահպատակ:

Տարիներ ետք Յակոբ եղբայրը, Գուրգենի մայրն ու վեց տարեկան փոքրիկ Գուրգենը գաղտնօրէն կը վերադառնան Էրզրում՝ իրենց տան ախոռին մէջ թաղուած ոսկեղէնն ու կարեւոր թուղթերը պարունակող երկաթե արկղը գտնելու եւ Կարս փոխադրելու նպատակով:

Աղջամուղջին՝ Գուրգենը եւ մայրը կը պահուըտին ախոռին քովի սենեակը, որուն ճեղքէն դիտելով կը հետեւին Յակոբին գործողութիւններուն:

Բրիչին հարուածներուն ձայնէն երկու թուրք ներս մտնելով կը բռնեն Յակոբը եւ տեղւոյն վրայ գլուխը դանակով կը կտրեն: Սարսափահար Գուրգենը կը փորձէ պոռալ, բայց մայրը անմիջապէս իր ափով ամուր կերպով կը փակէ անոր բերանը, որ ան եւս զոհ չդառնայ:

Կրկնաբար երեւակայել մօր մը ապրումները, երբ իր աչքին առջեւ կը մորթուի իր գաւակը ու իր երկրորդ հոգեհատորի կեանքի փրկութեան սիրոյն լուռ կերպով կը զսպէ իր զգացումները:

Իր սարսափին մէջ, Գուրգէն խածնելով մօր աջ ափը, փրցուցած էր անոր մկանները եւ վնասած ոսկորներուն, որոնց պատճառով մօր աջ ափը այնուհետեւ անգործածելի կը դառնայ:

Երկու ոճրագործ թուրքերը արկողը հանելով կ'անյայտանան:

Մայրը կը համբուրէ իր մորթուած գաւկին արիւնոտ գլուխը եւ մութին մէջէն գաղտագողի քալելով կը հասնին Կարինի պարսկական հիւպատոսարան:

Տխուր լուրը կը ցնցէ հիւպատոսը, որ յաջորդ օրը անձամբ իր առաջնորդութեամբ գանոնք կը հասցնէ Կարս:

Այս ողբերգութիւնը մինչեւ հոգւոյն խորքը կը ցնցէ Գուրգէնն ու մայրը: Գուրգէնն իր մօր եւ Սաթենիկ քրոջ հետ կը դրկուի ժընեւ (Չուիցերիա)՝ բժշկուելու համար: Հոն Գուրգէն կը յաճախէ ֆրանսական վարժարան:

Ժընեւի մէջ իրենց ամենօրեայ ժամադրավայրը կը դառնայ Հ. Յ. Դ.ի կեդրոնական պաշտօնաթերթ «Դրօշակ»ի խմբագրատունը:

Երեք տարի յետոյ կը վերադառնան Կարս, ուրկէ Լեւոն եղբօր ու Սաթենիկին հետ Գուրգէնը կը դրկուի Նոր Նախիջեւանի (Ներկայիս՝ Տոնի Ռոսթով, Հիւսիսային Կովկաս) հայկական վարժարանը, ուր ան մօտէն կը ծանօթանայ հայկական գրականութեան ու հայոց պատմութեան, ինչպէս նաեւ ռուսական գրականութեան:

Իր ուսուցիչներէն եղած են հայագիտութեան տիտան Հրաչեայ Աճառեանը, Բաբուրդեանը, Երուանդ Շահագիզը, Չեօրէքեան սարկաւազը (յետագային՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գեորգ Զ.) եւ Մատենեանը:

Նոր Նախիջեւանի վարժարանը աւարտելէ յետոյ, ծնողքին ստիպումին վրայ, Գուրգէն Եանիկեան կը դրկուի Ս. Էջմիածնի ճեմարանը՝ կրօնաւոր ըլլալու համար: Երիտասարդ Գուրգէնը իր խառնուածքին խոտոր համեմատող եկեղեցական կեանքէն ձերբազատուելու համար, մուտքի քննութեանց ժամանակ գիտակցաբար սխալ պատասխաններ տալով՝ կը մերժուի:

Գուրգէն եւ Լեւոն կը մտնեն Թիֆլիսի Ներսիսեան ճեմարանը, զոր աւարտելէ յետոյ Գուրգէն կը յաճախէ Մոսկուայի համալսարանը՝ հետեւելով ճարտարապետութեան ճիւղին: Իր ջերմ ու ընկերային խառնուածքին շնորհիւ, շուտով համալսարանի ուսանողական շրջանակի համակրանքին կ'արժանանայ ու գործօն մասնակցութիւն կ'ունենայ համալսարանի հասարակական կեանքին:

Գուրգէն Եանիկեան մաս կը կազմէ Մոսկուայի եւ Թիֆլիսի հռչակաւոր դերասանական խումբերուն, ինչպէս նաեւ հանրածանօթ Վահրամ Փափազեանի թատերախումբին՝ դերեր ստանձնելով Սիրանոյշի, Աբելեանի, Խարազեանի եւ ուրիշներու կողքին:

Կը պայթի Համաշխարհային Ա. Պատերազմը: Թերթերը ամէն օր կը հաղորդեն Հայաստանի պարպումի եւ հայկական ջարդերու աղիողորմ լուրերը:

Գուրգեն Եանիկեան ժամանակը հասած կը նկատէ հայ ժողովուրդին եւ եղբօր վրէժը լուծելու: Հայ, ռուս, վրացի եւ այլն, շուրջ յիսուն ուսանողներով կ'որոշեն մեկնիլ Թիֆլիս՝ կամաւորական գունդերուն մաս կազմելու համար:

Խումբը իր ղեկավարութեամբ կը հասնի Թիֆլիս՝ կամաւորներու արձանագրութեան գրասենեակը, ուրկէ բոլորը կը դրկուին Բ. գունդի հրամանատար Դրոյի բանակատեղին:

Հոն, շնորհիւ իր մեծ եղբօր՝ Սուրենին, Գուրգեն մօտէն կը ծանօթանայ Համազասպին եւ Քեռիին:

Կը հասնի նուիրական օրը: Եանիկեանի ծնողքը կու գան Իկտիր՝ հայ կամաւորները ճամբու դնելու: Բաժանումի պահուն Գուրգենին հայրը կ'ըսէ. «Տղա՛ս, չմոռնա՛ս ազգիդ վրէժը, չամչցնես զիս»: Երիտասարդ կամաւոր Գուրգեն կը պատասխանէ. «Հայրի՛կ, միթէ որո՞ւ գաւակն եմ...»:

Բանակը կը կտրէ թրքական սահմանը: Դրոյի գունդին մէջ Եանիկեանի եւ իր յիսուն ընկերներուն պարտականութիւն կը յանձնուի քանդուած կամուրջները վերաշինել եւ թշնամիին թիկունքը հետախուզական աշխատանքներ կատարել:

Օր մը այսպիսի պարտականութիւն մը կատարելէ յետոյ, վերադարձի ճամբուն վրայ, Գուրգեն բլուրէն վար ցատկելով կ'անյայտանայ մացառներուն մէջ: Իր ուշադրութիւնը կը գրաւէ փոքր քարերով եւ խոտերով ծածկուած, անբնական, արհեստական բլուր մը. դիզուած քարերն ու խոտերը մաքրելով կը տեսնէ զինուորական մթերանոցի վերածուած արուեստական քարայր մը: Որոշումը կայացնելը, երկու ռումբ վառելով նետելն ու ինքզինքը դէպի ձորը գլտորելը մէկ կ'ըլլայ:

Իր աչքերը կը բանայ հիւանդանոցին մէջ՝ շրջապատուած սպաներով եւ հիւանդապահուիչներով: Ընդհանուր հրամանատար իշխան Քալինին Գուրգենի կուրծքէն կը կախէ Ս. Գեորգի զինուորական շքանշանը: Գուրգեն հոն կ'իմանայ, թէ պայթեցուցած բլուրը եղած է թրքական բանակի զինամթերքի մեծ կեդրոններէն մէկը:

Ռումբի պայթումի ալիքէն փշրուած էին իր կռնակի երեք ոսկորները:

Երեք ամիս Թիֆլիսի զինուորական հիւանդանոցին մէջ կազդուրուելէ ետք՝ Գուրգեն Եանիկեան բանակ կը վերադառնայ:

Կարսը գրաւուած էր թրքական բանակին կողմէ. ընտանիքը կրցած էր փախչիլ Թիֆլիս: Քաղաքը վերագրաւուելով, Գուրգեն կը փնտռէ իր փեսան՝ Խաչիկը, եւ անոր գաւակը, որոնք Կարս մնացած էին:

Նահանջող թրքական բանակը ամբողջութեամբ այրած էր Կարսը: Իրենց տունն ու իր հօր իւղի գործարանը ամբողջութեամբ այրուած ու քանդուած էին:

Կարսի հայկական մայր եկեղեցին հրոյ ճարակ դարձած էր. «Բակին մէջ եւ եկեղեցիէն ներս 3000է աւելի այրած մարմիններ, դիզուած այլանդակ ձեւերով, բոլորովին անճանաչելի, ածխացած կամ կէս այրուած. իսկ ամենագարհուրելի եւ ընդվզեցուցիչ տեսարանը, որ պատկերացաւ աչքիս առջեւ, բակին կեդրոնը հարիւրաւոր հայ կիներու եւ աղջիկներու մերկ մարմիններն էին, գազանացած թուրքի կիրքին ենթարկուելէ յետոյ, լլկուած, դանակահարուած ու ապա այրուած եւ այլ դիրքերու մէջ»:

Եանիկեան սոյն տեսարանը պատմած ժամանակ, անկարող կը զգայ զսպելու իր յուզումը եւ աչքերը կ'արցունքոտին. «Իմ ամբողջ կեանքին պատմութեան մէջ, որպէս ջարդերու ականատես-վկայ, իմ վրաս ամենաշատ սարսափ ազդող տեսարաններուն մէջ ամենադժոխային եւ ահարկու պահը ապրեցայ հոն, որուն ազդեցութիւնը անշնջելիօրէն քանդակուած կը մնայ իմ յուշերուս եւ հոգեկան ապրումներուս վրայ, սարսուռի եւ ըմբոստացումի պատճառ դառնալով: Ա՛յդ օրէն ես ուխտեցի ցնցել թուրքը, ա՛յդ օրէն վրէժը եղաւ իմ կեանքիս գլխաւոր իտեալն ու նպատակը: Երբ զինուորական յիսուն սայլերով մեռելները կը փոխադրէինք քաղաքէն դուրս, փոսերու մէջ թաղելու, յանկարծ երկրորդ սարսափելի տեսարանի մը առջեւ գտնուեցայ. քարացած, աչքերս սառած, անհաւատալի եւ երկիւղով մօտեցայ պատին քով մահացած երկու մեռելներուն...: Մին փեսաս՝ Խաչիկն էր, իսկ միւսը՝ անոր եօթը տարեկան զաւակը, իրարու փաթաւած, աչքերը բաց, կարծէք օգնութիւն կը մուրային ինծմէ: Արցունքս չորցած էր. երկար դիտեցի, լսեցի եւ ապրեցայ անոնց տառապանքի ծայրը: Տեսարաններ, որոնք կարելի չէ՝ մոռնալ եւ չէ՛մ մոռցած: Անոնք դարձած են իտեալն իմ ամենօրեայ ապրումներուս եւ ծրագիրներուս մղում տուող աղբիւրներ»:

Ռուս քահանայի մը միջոցաւ Գուրգէն իր երկու հարազատները թաղել կու տայ հայոց գերեզմանատան մէջ:

Այս բոլորը, նաեւ վնասուած ոսկորներուն ցաւը հոգեպէս եւ մարմնապէս կը զգեսնեն Գուրգէն Եանիկեանի առողջութիւնը: Հրամանատարին որոշումով՝ ան կը ղրկուի Թիֆլիս՝ իր ծնողքին մօտ ժամանակ մը կազդուրուելու համար:

Ռուսական յեղափոխութիւնը պայթելով՝ բանակը կը սկսի նահանջել ու կը կազմալուծուի:

Եանիկեան կ'անցնի Մոսկուա՝ շարունակելու համար իր կիսատ թողած ուսումը: Բացառիկ յաջողութեամբ կ'աւարտէ համալսարանը եւ կը ստանայ ճարտարագետի վկայականը: Աւելի կատարելագործուելու համար, Եանիկեան կը յաճախէ Չուիցերիոյ համալսարանը՝ ստանալով ճարտարագիտութեան փիլիսոփայութեան դոկտորի տիտղոսը:

Գուրգէն Եանիկեան կը վերադառնայ Թիֆլիս, ապա կ'անցնի Խարքով, ուր կառավարութիւնը զինք պատասխանատու պաշտօնի կը նշանակէ:

Յեղափոխութեան շրջանին Գուրգէն Եանիկեանի ընտանեկան կեանքը կը խանգարուի: Ծնողքը կը կորսնցնեն իրենց ամբողջ ինչքը, տուներն ու կալուածները, եղբայրներէն մէկը կը զնդակահարուի, միւսը՝ կը կորսուի, հայրը կաթուածահար կը մահանայ, իսկ մայրը, խելակորոյս դարձած, կը սկսի փողոցները թափառիլ: Բարեկամներու օգնութեամբ կարելի կ'ըլլայ զայն գտնել ու փոխադրել Խարքով, իր մօտ:

Գուրգէն Եանիկեան կ'ամուսնանայ Խարքովի յայտնի քեօմիւրճեան ընտանիքի աղջկան՝ բժշկուհի Շուշանիկի հետ: Շուշանիկի հետ ամուսնութեան իբրեւ գլխաւոր պայման՝ Գուրգէն կը յայտնէ իր ուխտին գործադրութեան անոր աջակցութիւնը: Տիկին Շուշանիկ հաւատարմօրէն իր խոստումը կը կատարէ մինչեւ իր մահը (Ապրիլ 1974):

Բժշկուհի Շուշանիկի խնամքին տակ, Եանիկեանի մայրը իր բնական վիճակը կը վերագտնէ:

1929-1930 թուականներուն, խիստ ձմրան ու Սթալինի բռնի *քոլխոզացման* քաղաքականութեան պատճառով, Կովկասէն Տոն գետ տարածուող շրջանի 40 միլիոն բնակիչներ կը գտնուին սովամահ ըլլալու սպառնալիքին առջեւ: Կառավարութիւնը արտակարգ լիազօրութիւններ կը յանձնէ Գուրգէն Եանիկեանին՝ անհրաժեշտ քայլերով առաջըն առնելու համար աղէտին: Վիպային ողիսականներէ եւ տիւ ու գիշեր աշխատանքէ ետք, Գուրգէն Եանիկեան կը յաջողի ժամանակին հասցնել ու գիւղացիներուն բաժնել սերմնացուները՝ ժողովուրդը փրկելով ստոյգ մահէ: Իր սխրագործութեան համար, Մոսկուայի կեդրոնական կառավարութիւնը զինք կը պատուէ գնահատանքի գիրով, դրամական նուէրով եւ ամենակարեւորը, անկարելին ու անգտանելին՝ իր տիկնոջ հետ Պարսկաստան մեկնելու արտօնութեամբ, վաւերացուած անձամբ Սթալինի եւ Զալինիի ստորագրութիւններով:

1930ին իր տիկնոջ հետ կը փոխադրուի Պարսկաստան. կը հաստատուին Թաւրիզ: Զոն կը հիմնէ քաղաքին առաջին մետաղաձուլարանը:

Որպէս արուեստագետ-քանդակագործ՝ կառավարութեան խնդրանքով Պարսկաստանի յայտնի անձերու եւ թագաւորներու մետաղէ արձանները կը պատրաստէ:

Առաջին տարին իսկ Եանիկեան կ'արժանանայ պատուանշանի եւ դրամական վարձատրութեան: Կառավարութեան կողմէ կը հրաւիրուի Թեհրան՝ երկրին կարգ մը անհրաժեշտ շինութիւններու գործադրութիւնը ստանձնելու համար:

Գուրգէն Եանիկեան Թեհրանի մէջ կը հաստատէ իր գրասենեակը, որու պաշտօնէութեան թիւը քանի մը տարիէն կը հասնի աւելի քան 300 հոգիի:

Կառավարութեան թելադրութեամբ, ան կը պատրաստէ Պարսկաստանի առաջին եւ մեծագոյն զինագործարանը՝ լեռներու ստորերկրեայ բաժիններուն մէջ:

Պետութեան համար կ'իրագործէ նաեւ երկաթուղիի գիծեր, ճամբաներ, կամուրջներ ու կը կարգաւորէ Թեհրանի էլեկտրական լուսաւորութեան գործը:

Վրայ կը հասնի Զամաշխարիային Բ. Պատերազմը: Դաշնակից բանակները կը մտնեն Իրան: Ա. Մ. Ն.ի փոխ-նախագահ Թրումէնի մէկ ներկայացուցիչը եւ Ա. Մ. Ն.ի հիւպատոսը, որ Եանիկեանին մօտ անձնաւորութիւն մըն էր, անոր կ'առաջարկեն վեց տարուան համար վարձել անոր 15 հեքթար ջրառատ հողամասը՝ ամերիկեան բանակատեղի մը հաստատելու, առ այդ յանձնելով 250 հազար տոլարի վճարագիր մը որպէս վարձք: Եանիկեան կը մերժէ դրամական վարձքը ու կը խնդրէ, որ պայմանագրին վրայ գրեն՝ «առանց վարձքի»: Երկու ամերիկացիները շատ կը զարմանան այս չտեսնուած պայմանին առջեւ:

Դաշնակից մեծ պետութիւններէն դէպի Խորհրդային Միութիւն մեկնող եւ զինամթերք փոխադրող նաւերը մեծ կորուստներու կ'ենթարկուէին գերմանական սուզանաւերու կողմէ: Այս պատճառով կ'որոշուի օգնութիւնը հասցնել ցամաքի ճամբով՝ Իրանի վրայով: Դաշնակիցներու զինուորական ճարտարապետները Պարսից Ծոցէն խորհրդային սահման երկարելիք ճամբուն շինութեան ժամանակամիջոցը մէկ տարիէն աւելի կը նախատեսեն: Ամերիկացիք կը խնդրեն Եանիկեանէն, որ առաւելագոյնը 10 ամիսէն պատրաստելու պայմանով ստանձնէ գործը՝ վստահութիւն ունենալով անոր ուժերուն եւ ճշդապահութեան վրայ: Եանիկեան յանձն կ'առնէ այս դժուարին եւ պատասխա-

նատու գործը: Արժանապատուության եւ ծանր պատասխանատուության մը առջեւ կը գտնուի, որուն իրագործման համար հայու իր յամառ կամքը եւ յարատեւ ճիգը կը տրամադրէ: Որպէս փոխադրութեան միջոց՝ ան կ'օգտագործէ նոյնիսկ ուղտեր, ջորիներ եւ աւանակներ:

Խոստացուած 10 ամսուան փոխարէն, Եանիկեան երեք ու կէս ամիս աւելի կանուխ վերջացնելով ճամբուն շինարարութիւնը, կը հեռաձայնէ ամերիկացի ընդհանուր հրամանատարին, ըսելով, թէ ճամբան պատրաստ է գործածութեան համար:

Ամերիկացին չի հաւատար իր լսածին եւ իր օգնականներով անմիջապէս կը մեկնի Չանճան, ուր ականատես կ'ըլլայ իրականութեան:

Իր այս ձեռնարկէն շահելով որոշ գումար մը, Գուրգէն Եանիկեան տիկնոջ՝ Շուշանիկին հետ կ'որոշէ անցնիլ իր հօր պատուէրին ու իր երդման իրագործման, ինչը նիւթական մեծ ծախսերու կը կարօտէր:

«Իմ տիկինը, Շուշանիկը ինձանից պակաս չէր ոգեւորուած այդ գաղափարով: Չանճանի գործը վերջացնելուց յետոյ մենք հաւաքել ու հասել էինք որոշուած գումարին՝ նոյնիսկ աւելիով: Մենք սկսանք գիշեր ու ցերեկ մտածել, թէ որտեղ ենք իրագործելու մեր կեանքի նպատակին հասնելու համար որոշած ծրագիրը:

«Մեր ծրագիրը շատ պարզ էր, մեր անձնական դրամով գաղտնի կերպով պատրաստել մի շարժանկար, ցոյց տալու աշխարհին մեր ժողովուրդին քաջած տանջանքները եւ վայրենի-գազան թուրքին կոտորածները՝ Հայկական Ցեղասպանութիւնը, չմոռանալով այսպէս ասած «քաղաքակրթուած» ազգերի դաւադրութիւնները հանդէպ մեր իրաւունքներին:

«Սերը եւ Լոզանը իրենց արժանի տեղն ու գնահատանքն էին գտնելու այդ շարժանկարի մէջ: Գիրքը եւ սցենարը (բեմագիրը - Յ. Ա.) ես պատրաստել էի արդէն, իսկ անունը՝ տիկինս էր ընտրել՝ ԴՐԱԽՏ վերնագրով: Շարժապատկերը բացատրական գրքոյկներով միասին, ձրի պիտի ցուցադրուէր աշխարհի բոլոր անկիւնները: Մեր ցանկութիւնն էր ցնցել մարդկութեան խիղճը, արթնցնել մեր քնած ժողովուրդը, նոր կեանք եւ յոյս ներշնչել նոր սերունդին՝ բռնուն պայքարի նոր ձեւ մը - շղթայազերծելու մեր հողային իրաւունքները: Այս ծրագրի իրագործման համար կը մտածէինք որոշել յարմար վայրը»:

Փոխադրական ճամբուն աշխատանքը աւարտելէ քանի մը շաբաթ ետք Եանիկեան կը հրաւիրուի ամերիկեան հիւպատոսարան: Եանիկեանին ու տիկնոջ, որպէս Ա. Մ. Ն.ի պաշտպանութեան համար անհրաժեշտ մարդիկ, կ'առաջարկուի ամերիկեան քաղաքացիութիւն, զոր կ'ընդունին: Գուրգէն Եանիկեան միաժամանակ կ'արժանանայ ամերիկեան կառավարութեան մէկ շքանշանին:

Մինչեւ Գալիֆօրնիա հաստատուիլը Եանիկեան երկու անգամ կ'այցելէ Տէր Չօր եւ Պաղտատ: Քիւրտ գիւղապետի մը միջոցով կ'այցելէ 1915ի հայկական կոտորածներու վայրերը: Շատ մը վայրեր պեղել տալով, հազարաւոր թաղուած դիակներու կմախքներ դուրս կը հանէ:

Չորս անգամ աշխարհի շրջապտոյտը կ'ընէ՝ ազգերու եւ կրօնքներու պատմութեան լուրջ ուսումնասիրութիւններ կատարելով:

Իր շրջապատյոններուն ժամանակ մօտէն ծանօթացած է Յունաստանի Եորկիոս թագաւորին, Եգիպտոսի Ֆարուք թագաւորին, վարչապետներու, նախարարներու եւ բարձրաստիճան այլ պետական մարդոց, բոլորին ստորագրութիւնները առած է թրքական այն հազուագիւտ թղթադրամին վրայ, որ սուլթան Ապտիւլ Յամիտի ննջասէնեակը կախուած շատ թանկարժէք իւղանկարին հետ յետագային իբր պատրուակ օգտագործեց երկու թուրք դիւանագետներու սպանութեան համար:

Ծանօթացած է Սթալինին, Թրոցքիին, Միկոյեանին, Զալինինին եւ այլ համայնական գործիչներու:

Գրած է քաղաքական, աստուածաբանական եւ ընկերաբանական յօդուածներ՝ եւրոպական թերթերու մէջ՝ **Նեկրուկ** ստորագրութեամբ:

Իր գրած ութը գիրքերը՝ «Յուդայի Յաղթանակը», «Հարեմի Խաչը», «Մի Ամերիկացիի Ձայնը», «Համբարձում Առած Յիսուս», «Անհատը», «Կեանքի Սիմֆոնիան» (երաժշտութիւն-համերգ), «Մեր Մեսիան» եւ «Դրախտ», կը թարգմանուին ֆրանսերէնի, անգլերէնի եւ գերմաներէնի:

Ա. Մ. Ն. հաստատուելէն յետոյ Գուրգէն Եանիկեան «Դրախտ» գիրքը իր նիւթական միջոցներով կը վերածէ քսան ժամ տեւողութեամբ շարժապատկերի, ուր ներկայացուած են թրքական բարբարոսութիւնները: Ամերիկեան եւ թրքական շահերուն համընկնումը կը մղէ Ա. Մ. Ն.ի իշխանութիւնները՝ արգելքներ յարուցելու շարժապատկերին իրականացման առջեւ: Այս պատճառով ալ գործը կիսատ կը մնայ:

Գուրգէն Եանիկեանի հեղինակած գիրքերը կը յատկանշուին մարդկային խոր ապրումներով եւ փիլիսոփայական խորհրդածութիւններով: Իր գրական վաստակին համար Եանիկեան կ'արժանանայ ամերիկեան «Who's Who», «Blue Book», «Mark Twain» գրական կազմակերպութեան պատուոյ անդամութեան եւ «International Institute of Art & Literature» գովիցերիական գեղարուեստական հիմնարկի ցմահ պատուոյ անդամութեան, ըլլալով վերջինիս 1800 անդամներէն միակ հայը, Ուիլիամ Սարոյեանի կողքին:

Ա. Մ. Ն. հաստատուելէ յետոյ, արժեքաւոր գրութիւններով կ'աշխատակցի հայկական թերթերու եւ ամսագիրներու:

Գուրգէն Եանիկեան հայկական ոչ մէկ քաղաքական կազմակերպութեան մաս կազմած է: Պահած է իր մօտ բարեկամութիւնը բոլորին հետ:

Եանիկեան հնարած է իր անունը կրող «Եանիկսքօֆ» գործիքը, որուն միջոցաւ կարելի է տեսնել երկրին 400 ոտք խորութեամբ եւ 40 ոտք տրամագիծով ծաւալին մէջ գտնուող իրերը: Գործիքին հնարման խթան եղած է ութը տարեկան աղջնակի մը գետնին բացուածքէն իյնալն ու կորսուիլը: Իր գիտին համար ան ամերիկեան կառավարութենէն գնահատական նամակ մը եւ նիւթական նուէր կը ստանայ: Եանիկեան իրեն ուղարկուած նիւթական նուէրը կառավարութեան վերադարձնելով կը խնդրէ, որ այդ գործիքը գործածուի միմիայն բարի նպատակներու համար: Սակայն երբ ան Տեր Զօրի անապատները խուզարկելու, հայերու կմախքները հաւաքելու եւ յարմար տեղ մը հսկայ յուշարձան մը կանգնեցնելու ծրագիրին համար ամերիկեան կառավարու-

թենեն կը խնդրէ իր հնարած գործիքին գործածութիւնը, բացարձակապէս ԿԸ ՄԵՐ-ԺՈՒԻ՝ յանուն թրջական բարեկամութեան պահպանման:

Ահաւասիկ այս պայմաններու եւ դրդապատճառներու ճնշումին տակ գտնուող կարինցի Եանիկեանը պարտաւորուած կը զգայ կատարել 27 Յունուար 1973ի աշխարհացունց արարքը՝ «Մահ իմացեալ անմահութիւն է» նշանաբանով:

Իր ցկեանս բանտարկութեան վճիռը ստանալէ յետոյ, Գուրգէն Եանիկեանը եղաւ առաջին անհատը, որ 1974 Յունուարին նամակով մը Ա. Ս. Ն.ի Քոնկրէսէն պահանջեց Ապրիլ 24ը յայտարարել «Ցեղասպանութեան Օր»:

Եանիկեան խառնուածքով հաստատուն, կամքի տէր բացառիկ ծնունդ մըն է, ծրագրող, հեռատես, յամառ, յարատեւող, իր որոշումներուն մէջ անսահանջ, անկաշկանդ եւ վճռական, որպէս մարդ՝ արդարութիւնը պաշտող եւ անարդարութեան դէմ ուխտեալ պայքարող:

Ան ջատագովն է աշխարհի բոլոր ազգերու խաղաղ համակեցութեան, ինչը արտացոլուած է իր գրութիւններուն մէջ:

Որպէս հայ՝ անսահմանօրէն հպարտ է իր կոչումով եւ ազգութեամբ: Եզակի հայ, որ կրցաւ անցնիլ Ռուսիքոնը, կատարել վճռական, համարձակ եւ ՊԱՏՄԱԿԱՆ քայլը:

Ահաւասիկ Եանիկեանի համառօտ կենսագրականը:

Ահաւասիկ Զայկական Զարցը վերակենդանացնող, անոր համար իր կեանքը նուիրաբերող անձը, որ ցկեանս բանտարկութեան դատապարտուեցաւ 78 տարեկան ալեհեր հասակին:

Դարձաւ թուրքին մեղքերը քաւող անմեղ զոհը, «քաղաքակրթուած» ազգերու դիւանագիտութեան եւ անոր կողքին՝ հայ «քաղաքական» կազմակերպութեանց շիլ հաշիւներուն ու քաղաքական մուրացկանութեան քաւութեան նոխազը:

Տասը տարիէ աւելի ամերիկեան բանտերուն մէջ մնալէ յետոյ, ամերիկեան մարդասէր իշխանութիւնները 88-ամեայ Գուրգէն Եանիկեանը բանտէն դուրս հանեցին, երբ ան արդէն ծանր հիւանդ էր ու մահամերձ եւ դրին տնային կալանքի տակ:

Քանի մը շաբաթ ետք, 27 Փետրուար 1984ին, Զերոսը փակեց իր աչքերը այս աշխարհին: Անոր մարմինը յանձնուեցաւ ամերիկեան օտար հողին (ըստ լոսանճելոսաբնակ Զրանդ Սիմոնեանի՝ Գուրգէն Եանիկեանի մարմինը այրուելով՝ մոխիրը պահուած է իր փաստաբանին տիկնոջ քով, «Սփիւռք» պարբերաթերթ, 2008 - Յ. Ա.):

Անդին՝ Մայր Զայրենիքի մէջ, 1984ի Մարտի առաջին օրերուն, խիստ հետապնդումներու պայմաններու մէջ, անծանօթ ձեռքեր ծաղկեփունջ մը կը զետեղէին Ծիծեռնակաբերդի յուշահամալիրի Անմար Կրակին շուրջ, «Նոր Ժամանակների Մեծագոյն Ուսուցիչ Զերոս Գուրգէն Եանիկեանին» մակագրութեամբ:

Գուրգէն Եանիկեանի սրբազան մասունքները, Սփիւռքի ցուրտ հողին յանձնուած Անդրանիկի, Զայկական ազատագրական պայքարի հին ու նոր ֆետայիներու աճիւններուն նման, հայրենադարձի կը սպասեն (տասնամեակներու օտարութենէ ետք Զօր. Անդրանիկի աճիւնները ամփոփուեցան Երեւանի Եռաբլուրի պանթէոնին մէջ. նոյն պանթէոնին մէջ Գուրգէն Եանիկեանի խորհրդանշական գերեզմանը կը սպասէ իր անուան տիրոջ սուրբ աճիւններուն հայրենադարձը - Յ. Ա.):

Յետմահու հայրենադարձ ետք միայն, Գուրգեն Եանիկեանի՝ հողեղէն մարդուն կենսագրութիւնը վերջ պիտի գտնէ (ընդգծումը իմ կողմէս է - Յ. Ա.):

Իսկ Գուրգեն Եանիկեանի՝ Ոգեղէն Մարդուն, Յեղի՛ն Մարդուն կենսագրութիւնը անվերջ է ու յաւիտեան:

Եանիկեան յաւերժ միացած է գինք ծնող Յեղի Ոգիին ու դարձած մասնիկը Հայութեան յաւիտենական կենսագրութեան:

«Սփիւռք», Յունուար 1990, թիւ 1 եւ

(որոշ փոփոխութիւններով)

**ԳՈՒՐԳԷՆ ԵԱՆԻԳԵԱՆԻ ԱՐԱՐՔԻՆ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐՆ ՈՒ
ՀԱՅ-ԹՐԵԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ
«ՉԱՐԹՕՆՔ» ՕՐԱԹԵՐԹԻՆ ՄԵՋ
1973-1995 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ**

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

- «77-ամեայ Ամերիկահայ Գուրգեն Եանըքեան Կը Սպաննէ Լոս Անճելըսի Թուրք Հիւպատոսը Եւ Անոր Օգնականը» եւ «Գ. Եանըքեան Կը Խոստովանի», «Չարթօնք», 30 Յունուար 1973, էջ 1:
- «Սանթա Պարպըրայի Սպանութիւնը - Իսթանպուլի Մէջ Թրքական Իշխանութիւնները Հսկողութեան Տակ Կ'առնեն Հայոց Պատրիարքարանը, Եկեղեցիները Եւ Այլ Հաստատութիւններ», «Չարթօնք», 31 Յունուար 1973, էջ 1 (լուսանկարով):
- «Գուրգեն Եանիկեանի Դատավարութիւնը՝ Փետր(ուար) 16ին», Խմբ(ագրութիւն), «Գուրգեն Եանիկեանի Բացատրական Նամակը» եւ «Գուրգեն Եանիկեանի Նամակը՝ Իր Արարքը Բացատրող», «Չարթօնք», 2 Փետրուար 1973, էջ 1 եւ 3:
- «Գուրգեն Եանիկեանի Երկար Նամակ-Յուշագրին Վերջին Մասը», «Ի՞նչ Կը Գրէ Թուրք «Միլլիէթ» Թերթը Սանթա Պարպըրայի Դէպքին Մասին» եւ «Եանիկեան. «Յանցաւոր Չեմ, Թուրքերը Պատասխանատու Կը Նկատեմ Ընտանիքիս 26 Անդամներուն Ջարդին», «Չարթօնք», 3 Փետրուար 1973, էջ 2 եւ 3:
- «Գուրգեն Եանիկեանի Երկար Նամակ-Յուշագրին Վերջին Մասը», «Գուրգեն Եանիկեանի Նամակը Զալիֆօրնիոյ Իր Հայրենակիցներուն» եւ «Նախագահ Ռ(իչըրտ) Նիքսոնի Նամակը Թրքական Հանրապետութեան Նախագահին», «Չարթօնք», 4 Փետրուար 1973, էջ 2:
- «Սանթա Պարպըրայի Դէպքը - Գ. Եանիկեան Կը Մերժէ Փաստաբանի Մը Օժանդակութիւնը», «Գուրգեն Եանիկեանի Երկար Նամակ-Յուշագրին Վերջին Մասը» եւ «Պոլսահայ Մամուլի Արձագանգները Գուրգեն Եանըքեանի Արարքին Մասին», «Չարթօնք», 6 Փետրուար 1973, էջ 1, 2 եւ 4:
- «Գուրգեն Եանիկեանի Պարագան», «Չարթօնք», 8 Փետրուար 1973, էջ 2:
- «Գուրգեն Եանիկեանի Պարագան», «Չարթօնք», 10 Փետրուար 1973, էջ 3:
- «Մարսէյի Մէջ Մեծ Եղեռնի Յուշարձանին Բացման Հետեւանքով Փարիզի Թուրք Դեսպանը Անքարա Կը Կանչուի», «Չարթօնք», 14 Փետրուար 1973, էջ 1:
- «Մարսէյի Մէջ Մեծ Եղեռնի Յուշարձանին Բացման Հարցը - Ճշդում՝ Ֆրանսական Կառավարութեան Կողմէ», «Չարթօնք», 16 Փետրուար 1973, էջ 1:
- «Առանց Մեկնաբանութեան - Թրքահայու Մը Բաց Նամակը Աշխարհի Բոլոր Հայերուն», «Չարթօնք», 16 Փետրուար 1973, էջ 2:
- «Նախագահութեամբ Ֆրանսայի Պետական Զարտուղար Ժոզեֆ Զոմիթիի՝ Մարսէյի Մեծ Եղեռնի Յուշարձանին Բացման Փառաշուք Հանդիսութիւնը», «Չարթօնք», 18 Փետրուար 1973, էջ 2:

- Անդրանիկ Անդրեասեան, «Հին Եղեռնին Նոր Չոհը», Վ. Կեսարացի (Վահան Էլմասեան), «Հայկական Ցեղասպանութեան Նոր Չոհերը - Սանթա Պարպըրայի Արիւնահեղութեան Հեռաւոր Դրդապատճառները» եւ Թուրք մամուլ, «Ինքզինքնուս Գանք...», «Չարթօնք», 20 Փետրուար 1973, էջ 2:
- «Մարսէլի Մէջ Մեծ Եղեռնի Յուշարձանին Բացումը» (լուսանկարով), «Մարսէլի Նահատակաց Յուշարձանին Բացումը» եւ «Մարսէլի Նահատակաց Յուշարձանին Հարցին Առիթով Ֆրանսական «Զոմպա» Թերթը Կը Դատապարտէ Թուրքիան. «Չգո՛յշ, Միջազգային Մամուլը Կրնայ Լայնօրէն Բանալ Հայկական, Յունական Եւ Երտական Թղթածրարները», «Չարթօնք», 21 Փետրուար 1973, էջ 1 եւ 2:
- «Խմբագրական - Գող՝ Սիրտը Դող», «Չարթօնք», 22 Փետրուար 1973:
- Յովհ(աննէս) Վարժապետեան, «Դեռ Այդ Թուրքը Աշխարհ Չէ Եկած», «Չարթօնք», 25 Փետրուար 1973, էջ 2:
- «Գ. Եանիկեանի Դատավարութիւնը՝ Բացուած», «Չարթօնք», 28 Փետրուար 1973, էջ 1:
- «Մարսէլի Յուշարձանին Բացման Հետեւանքները - Պատասխան Սը Թրքական Կառավարութեան», «Թուրք Մամուլ - Հայկական Յուշարձանին Ներքեւ Ֆրանսական Մեղքը» եւ Սանթրը տ'Էթիւտ Արմենիէն, Մարսէլ, «Կոչ Համայն Հայութեան», «Չարթօնք», 1 Մարտ 1973, էջ 1 եւ 3:
- «Ցեղասպանի Անդրեասեան», «Չարթօնք», 4 Մարտ 1973, էջ 2:
- «Թուրքերուն Կողմէ Ատուած Մարդը» (լուսանկարով), «Չարթօնք», 6 Մարտ 1973, էջ 1:
- «Խմբագրական - Թրքական Յուշարձաններ...», «Չարթօնք», 7 Մարտ 1973, էջ 2:
- «Պոլսահայ Մի Ոմն Թ. Ստեփանեանի Նոր Ձաքռտուքները», «Չարթօնք», 10 Մարտ 1973, էջ 2:
- «Մարսէլի Հայկական Յուշարձանը», «Չարթօնք», 13 Մարտ 1973, էջ 2:
- Անդրանիկ Անդրեասեան, «Գուրգէն Եանիկեանի Դատին Առթիւ», «Չարթօնք», 15 Մարտ 1973, էջ 2:
- «Ռամկավար Ազատական Մամուլ - Մարսէլ եւ Մոնթեպելլօ (Մեծ Եղեռնի Երկու Յուշարձաններուն Շուրջ)» եւ «Թուրք Մամուլ - Հայկական Անտեղի Ինքնարդարացումներ Ու Մեղադրանքներ», «Չարթօնք», 16 Մարտ 1973, էջ 2 եւ 3:
- Վեր. Յրթ. (Յարութիւն) Հելվաճեան (Փոխ-Նախագահ Յուշարձանի Յանձնախումբին), «Մարսէլի Յուշարձանի Բացումէն Ետք», «Չարթօնք», 17 եւ 18 Մարտ 1973, էջ 2:
- Անդրանիկ Անդրեասեան, «Գուրգէն Եանիկեանի Դատին Առթիւ» եւ «Կոչ Հայ Հասարակութեան» (Գ. Եանիկեանի դատավարութեան նիւթապէս օժանդակելու), «Չարթօնք», 23 Մարտ 1973, էջ 2 եւ 3:
- Անդրանիկ Անդրեասեան, «Գուրգէն Եանիկեանի Դատին Առթիւ» եւ Յովհաննէս Յակոբեան, «Փրատոյն Յետոյ...», «Չարթօնք» 25 եւ 27 Մարտ 1973, էջ 2 եւ 3:
- Լենացի, «Գուրգէն Եանիկեանի Արարքին Առթիւ Թրքական Բարբաջանքներ», «Չարթօնք», 25 եւ 27 Մարտ 1973, էջ 2:

- «Ամերիկահայ Իրադարձութիւններ - Այսօր Ճաւ - Մարդ Է Եղեր...», «Չարթօնք», 29 Մարտ 1973, էջ 2:
- Ն. Պ. (Խաւանաբար՝ Նազարեթ Պշտիկեան), «Երբ «Գորշ Գայլ»ը Գառնուկի Սորթ Կը Զագնի...», «Չարթօնք», 3 Ապրիլ 1973, էջ 2:
- «Արտասուաբեր Ռումբեր Փարիզի Թրքական Զիւլատոսարանին Վրայ», «Չարթօնք», 5 Ապրիլ 1973, էջ 1:
- «Թուրքիա - Անգարա Ֆրանսական Կառավարութենէն Կը Պահանջէ...», «Չարթօնք», 6 Ապրիլ 1973, էջ 1:
- «Թրքական Դահլիճը Երկարօրէն Կը Զննէ Փարիզի Ահաբեկչական Արարքները. «Ռումբերուն Զարցը» Զայեւուն Կը Վերագրուի...», «Չարթօնք», 7 Ապրիլ 1973, էջ 1:
- Անդրանիկ Անդրեասեան, «Մարսիլիոյ Յուշարձանին Դասը», «Չարթօնք», 10 Ապրիլ 1973, էջ 2:
- Զ. (Յակոբ Աւետիքեան), «Օրուան Դեպքերուն Զետ - Ապրիլեան Խորհրդածութիւններ», «Չարթօնք», 10, 11 եւ 12 Ապրիլ 1973, էջ 2:
- «Փարիզի Զիւլատոսարանը Եւ Թուրք Օդային Ճամբաներու Գրասենեակը Յարձակումի Ենթարկողները Իբրեւ Թէ Զայեւ են...», «Չարթօնք», 11 Ապրիլ 1973, էջ 2:
- Վ. Կեսարացի (Վահան Էլմասեան), «Մեր Ներքին Ստահոգութիւններէն Զայ Դատի Վասակ Սիւնիները», «Չարթօնք», 14 Ապրիլ 1973, էջ 2:
- «Անծանօթներ Մտած Են Լոս Անճելըսի Թրքական Զիւլատոսարանը», «Չարթօնք», 18 Ապրիլ 1973, էջ 1:
- «Թուրք Մամուլ - Թեքին Էրերի Նենգամիտ ու Գրգռիչ Յօդուածը - «Միլլիէթ»ի «Յայտնութիւնները» Լոս Անճելըսի եւ Շիքակոյի Նոր Դեպքերուն Մասին», «Չարթօնք», 19 Ապրիլ 1973, էջ 3:
- «Լիբանանահայութիւնը Տպաւորիչ Զանդիսութիւններով Եւ Ձեռնարկներով Կ'ոգեկոչէ Ապրիլեան Եղեռնի Նահատակներուն Յիշատակը» (առաջին անգամ ըլլալով լիբանանեան մամուլը լայնօրէն կ'արձագանգէ Ապրիլ 24ի Նախաձեռնութեանց) եւ «Ապրիլ 24ը Լիբանանեան Ազգային Տօն Յայտարարելու Մասին... Զանրապետական Կուսակցութեան Մամլոյ Ասուլիսը», «Չարթօնք», 26 Ապրիլ 1973, էջ 1 եւ 2:
- «Թուրք Մամուլ - Եանիկեանին Զամար Անուանի Փաստաբան Մը Վարձուեցաւ...», «Չարթօնք», 27 Ապրիլ 1973, էջ 2:
- Ս., «Ակնարկ Զայկական Դատի Զետապնդման Միջոցներու Մասին», «Փարիզահայ Կեանք - Զադորդագրութիւն» եւ Բժիշկ Կլորեան, «Նամակ Խմբագրութեան», «Չարթօնք», 28 Ապրիլ 1973, էջ 3:
- «Թուրք Մամուլ - Նոր Մեկնաբանութիւններ Ու Ձաբոտութիւններ», «Չարթօնք», 29 Ապրիլ 1973, էջ 2:
- Զ. (Յակոբ Աւետիքեան), «Օրուան Դեպքերուն Զետ - Պէյրութի Թուրք Դեսպանին Անտեղի Նախագգուշութիւնը» եւ «Արշաւիր Շիրակեանի Մահը», «Չարթօնք», 1 Մայիս 1973, էջ 2:

- «Առանց Մեկնաբանության - Պեյրուֆի Հայերը Կը Չիսուին - «Մեր Ձեռքը Տասը Հազար Հոգիսոց Բանակ Ունինք», - Ըսաւ Հայ Դեկավարներէն Մէկը», «Չարթօնք», 3 Մայիս 1973, էջ 2:
- «Թրքական Նոր Ձաքոտութիւնք Եւ Արձագանգներ - «Այս Հայերը Ո՞վ Կը Գրգռէ», «Հայերը Ֆրանսայի Մէջ Հակաթուրք Ցոյցեր Ըրին» եւ «Ողջմիտ Հայերը Ծիծաղով Դիմաւորեցին Լիբանանի Մէջ Զոմանտոյի Բանակին Կազմութեան Լուրը», «Չարթօնք», 4 Մայիս 1973, էջ 2:
- Լեւոն Թիւրքիւնճեան (Լոզան), «Մենք Ալ Պրոպականտ Ընենք...» եւ Յովհ(աննէս) Վարժապետեան (Մարսիլիա), «Ապրիլ 24ի Մեծ Եղեռնին Համազգային Ոգեկոչումը Մարսիլիոյ Մէջ», «Չարթօնք», 5 Մայիս 1973, էջ 2 եւ 3:
- «Նամակ Մարսէյլէն...» եւ «Յայտարարութիւն», «Չարթօնք», 9 Մայիս 1973, էջ 2:
- «Եանիկեանի Դատին Համար», «Չարթօնք», 11 Մայիս 1973, էջ 2:
- Լեւոն Թիւրքիւնճեան, «Թրքական Անփոխելի Վայրագ Ստայնութիւնը» եւ «Փարիզի Մեծ Դեսպան Հասան Ըշրք Պաշտօնատեղին Կը Վերադառնայ», «Չարթօնք», 12 Մայիս 1973, էջ 2 եւ 4:
- Անդրանիկ Անդրեասեան, «Պահանջել Ցեղասպաններու Բռնագրաւած Հողերը», Ա. Դպիր, «ԿԵՆ-Լուրջ, ԿԵՆ Կատակ ՀԱՂԱՅ» եւ «Հայկական Նիւրեմպերկ», «Չարթօնք», 16 Մայիս 1973, էջ 2 եւ 3:
- Վեր. Նշան Խաչատուրեան, «Թուրքերու Յերիւրածոյ Ջարդը», «Չարթօնք», 17 Մայիս 1973, էջ 2:
- Թղթակից, «Ապրիլեան Եղեռնի Փողոցին» Բացումը Վիենի Մէջ», «Չարթօնք», 25 Մայիս 1973, էջ 2:
- Հ. (Յարութիւն) Թուրշեան, «Սարդարապատի Ճակատամարտի Նահատակների Յիշատակին Դերենիկ Դեմիրճեանի Նորայայտ Բանաստեղծութիւնը» եւ Դ. Դեմիրճեան «Սարտարաբադ», «Չարթօնք», 27 Մայիս 1973, էջ 2:
- Անդրանիկ Անդրեասեան, «Հայաստան՝ Ազգային Հայրենիք», «Չարթօնք», 30 Մայիս 1973, էջ 2:
- Ստեփան Շահպազ, «Երիտասարդները Ճանչնալ», «Չարթօնք», 2 Յունիս 1973, էջ 2:
- Բաղէց Ն. Թ. (Նազարէթ Թօփալեան), «Ֆրանսահայ Գաղութին Նոր Նախաձեռնութիւնը - Ուխտագնացութիւն Դեպի Վերտօն - Յիշատակի Երեք Սալաքարեր Կը Չետեղուին Տուօմոնի Ոսկրանոց-Կոթողին Վրայ» (լուսանկարներով), «Չարթօնք», 6 եւ 7 Յունիս 1973, էջ 2 եւ 3:
- Չ. (Յակոբ Աւետիքեան), «Օրուան Դեպքերուն Հետ - Անգամ Մը Եւս Լիբանանի Թուրք Դեսպանին Հետ», «Չարթօնք», 7 Յունիս 1973, էջ 2 եւ 3:
- «Գուրգէն Եանիկեանի Դատավարութիւնը Սկսաւ...», «Չարթօնք», 9 Յունիս 1973, էջ 3:
- Անդրանիկ Անդրեասեան, «Թուրքիոյ ԴԷՄ, ԹԷ՝ Հայաստանի՝ ԴԷՄ», «Չարթօնք», 14 Յունիս 1973, էջ 2:

- «Թուրքիոյ Դեսպանը Փարիզ ՉԷ Վերադարձած», «Չարթօսը», 26 Յունիս 1973, էջ 1:
- Արեւմտահայ, «Անձնական Նամակ Իտալիոյ Թրքական Դեսպան Թուրկուր Մենեմենճիօղլուին», «Չարթօսը», 29 եւ 30 Յունիս 1973, էջ 2:
- Թղթակից, «Գուրգէն Եանիկեան Կը Հարցաքննուի», «Չարթօսը», 1 Յուլիս 1973, էջ 2:
- Թղթակից, «Գ. Եանիկեան Հեռատեսիլի Վրայ» եւ «Գ. Եանիկեան Առաջին Աստիճանի Յանցաւոր Հռչակուած», «Չարթօսը», 11 Յուլիս 1973, էջ 2:
- «Մեծ Եղեռնի Յուշահանդէս Հեռաւոր Վենեզուելայի Մաթուրին քաղաքին մէջ», «Չարթօսը», 21 Յուլիս 1973, էջ 2:
- Ա., «Լուսանցքի Նշմարներ - Մարդասիրութիւն...», «Չարթօսը», 21 Յուլիս 1973, էջ 2:
- «Տկեանս Բանտարկութիւն Գուրգէն Եանիկեանին», «Չարթօսը», 24 Յուլիս 1973, էջ 1:
- «Թրքաշխարհիկ...», «Չարթօսը», 25 Յուլիս 1973, էջ 4:
- Վ. Կեսարացի (Վահան Էլմասեան), «Մարդկութեան Խղճին Առջեւ - Աղաղակող Անարդարութեան Մը Անդարմանելի Հետեւանքները», «Չարթօսը», 28 Յուլիս 1973, էջ 2:
- Արամ Դէյրմենջեան, «Մայքըլ Արլէն-Որդին Հայաստանում», «Չարթօսը», 14 Օգոստոս 1973, էջ 2:
- Անդրանիկ Անդրեասեան, «Գուրգէն Եանիկեանի Դատէն Ետք», «Չարթօսը», 25, 26, 28 եւ 29 Օգոստոս 1973, էջ 2:
- «Հայ Թեկնածուներ» (Թուրքիոյ խորհրդարանական ընտրութիւններուն երկրին երկու մեծագոյն կուսակցութիւններուն կողմէ), «Չարթօսը», 31 Օգոստոս 1973, էջ 2:
- Անդրանիկ Անդրեասեան, «Արմինիըն Էսեմպլի»ի Մասին», «Չարթօսը», 21 Սեպտեմբեր 1973, էջ 2:
- Անդրանիկ Անդրեասեան, «Առաջարկներ «Արմինիըն Էսեմպլի»ին», «Չարթօսը», 22 Սեպտեմբեր 1973, էջ 2:
- «Հեռագիր Թուրքիոյ Հանրապետութեան Նախագահ Քորութիւրքին» (Պոլսոյ Հայոց Պատրիարքէն), «Չարթօսը», 27 Սեպտեմբեր 1973, էջ 1:
- «Ողբերգութիւնը Կը Շարունակուի... - Թուրքիոյ Հայոց Պատրիարքին Հայրական Սրտակեղեք Թելադրութիւնները Իր Հօտին», «Չարթօսը», 28 Սեպտեմբեր 1973, էջ 1:
- Մարտիրոս Գոչ, «Օրուան Մտածումներ - Ամեն. Ս. Պատրիարք Հօր Հեռագրին Առթիւ», «Չարթօսը», 29 Սեպտեմբեր 1973, էջ 2:
- Վ. Կեսարացի (Վահան Էլմասեան), «Օրուան Տոմսակ - Միշտ Միեւնոյն Բարքերը...», «Չարթօսը», 20 Սեպտեմբեր 1973, էջ 2:
- «Խմբագրական - Ցեղասպանութիւնը Կը Շարունակուի Թուրքիոյ Մէջ...», «Չարթօսը», 3 եւ 5 Հոկտեմբեր 1973, էջ 2:

- Իրազեկ (հաւանաբար՝ Արմէն Ենովք), «Ի՞նչ Կ'ընեն Թուրքերը, Ի՞նչ Կ'ուզեն Թուրքերը», «Չարթօնք», 20, 21 եւ 23 Հոկտեմբեր 1973, էջ 2:
- «Թուրքիա Ապահովական Միջոցներու Կը Դիմէ Ընդդէմ Արտասահմանի Հայերուն...» եւ Միհրան Գարագաշ, «Հայկական Խնդիր Ըսուածը Եւ Թուրք Մամուլին Կատարած Դերը», «Չարթօնք», 9 Նոյեմբեր 1973, էջ 1 եւ 2:
- Վարդան Եղիշեան, «Գորշ Գայլերը Նորէն Ոռնալ Սկսան...», «Չարթօնք», 17 եւ 18 Նոյեմբեր 1973, էջ 2 եւ 3:
- «Խմբագրական - Ինչ Կը Հետապնդեն Թուրք Հակահայ Գրչակները», «Չարթօնք», 20 Նոյեմբեր 1973, էջ 2:
- «Թուրքիա - Օր. Հերմինէ Գալուստեան Կախակայուած Է Էսայեան Վարժարանի Տնօրէնութենէն», «Չարթօնք», 28 Նոյեմբեր 1973, էջ 1:
- Շնորհք Արքեպիսկոպոս Գալուստեան (Պատրիարք Հայոց Թուրքիոյ), «Պատրիարք Հօր Տարեկան Տեղեկագիրը 1973 Տարուան Համար», «Չարթօնք», 24 եւ 25 Յունուար 1974, էջ 2:
- Ճոն Հաննեսեան, «Թուրքիոյ Հայոց Կացութեան Մասին» եւ «Հայկական Համաժողովին Յայտարարութիւնը Թրքահայոց Կացութեան Մասին», «Չարթօնք», 27 Յունուար 1974, էջ 3:
- Անդրանիկ Անդրեասեան, «Հայերէն Թերթը Եւ Համայնքը», «Չարթօնք», 9, 12 եւ 13 Փետրուար 1974:
- «Թուրքիոյ Ապահովութեան Ազգային Խորհուրդը Արտակարգ Նիստ Կը Գումարէ», «Չարթօնք», 8 Մարտ 1974, էջ 1:
- «Պայքար», «Նոր Բարի Նոյս...», «Չարթօնք», 10 Մարտ 1974, էջ 2:
- «Գ(աբրիէլ) Նորատունկեան Եւ Պալքանեան Պատերազմը - «Միլլիյէթ» Ներբողը Կը Հիւսէ Նախկին Արտաքին Նախարարին», «Չարթօնք», 12 Մարտ 1974, էջ 4:
- «Անդրանիկ Կրպիճեան Կը Լռեցնէ Հայատեաց Գործակալները», «Չարթօնք», 16 Մարտ 1974, էջ 3 եւ 4:
- Ոսկան Յովհաննեսեան, «Հայապահումն Ի՞նչպէս Կ'ընթանայ Թուրքիոյ Մէջ...», «Չարթօնք», 19 Մարտ 1974, էջ 3:
- Հայկական Դատի Կեդր. Յանձնախումբ, «Հեռագիր Մ. Ա. Կ.ի Ընդի. Զարտուղար Քուրթ Վալտիայմին» եւ Լեւոն Քեշիշեան, «Մ. Ա. Կ.ի Մարդկային Իրաւանց Յանձնախումբ - Թուրք Դեսպանը Կը Պահանջէ Չնշել Ցեղասպանութեան Չեկուցագրին Մէջ Հայութեան Անդրադարձող Ամէն Յիշատակութիւն», «Չարթօնք», 22 Մարտ 1974, էջ 1 եւ 2:
- «Պոլսահայ Վարժարաններու Վրայ Դրուած Սեղմումներու Առնչութեամբ Հայ Երեսփոխանները Դիմեցին Լիբանանի Արտաքին Նախարարին, Յուշագիր Սը Ներկայացնելով» եւ «Խմբագրական - Ցեղասպանի Ճամարտակութիւններ», «Չարթօնք», 24 Մարտ 1974, էջ 1 եւ 2:
- Վ. Կեսարացի (Վահան Էլմասեան), «Օրուան Խորհրդածութիւն - Ո՞վ Չով Յանցաւոր Կը Հանէ...» եւ «Արմինիըն Էսեմալի»ի Յարգանքի Խօսքը՝ Ճան Հանեսեանի Անմոռաց Յիշատակին», «Չարթօնք», 26 Մարտ 1974, էջ 2:

- Հայ Անհատներու Միացեալ Կազմակերպութիւն (ՀԱՄԻԿ), «Կոչ Ամբողջ Հայութեան», «Չարթօնք», 27 Մարտ 1974, էջ 3:
- «Թրքական Տի. Սի. 10ի Արկածը Հետեւանք Է Թեքնիք Պատճառներու», «Չարթօնք», 28 Մարտ 1974, էջ 1:
- Վ. Կեսարացի (Վահան Էլմասեան), «Վերլուծումներ - Ո՞վ Չով Յանցաւոր Կը Հանէ (Շարունակութիւն)», «Չարթօնք», 30 Մարտ 1974, էջ 3:
- «Նոր Սեղմումներ Թուրքիոյ Փոքրամասնութեանց Վրայ», «Չարթօնք», 31 Մարտ 1974, էջ 1:
- Թորոս Ծիռեան, «Արդարութիւն Կ'ուզենք...», «Չարթօնք», 2 Ապրիլ 1974, էջ 3:
- Ն. Պ. (Խաւանաբար՝ Նազարէթ Պշտիկեան), «Չայրացուցիչ Անարդարութիւն 1974ին», «Չարթօնք», 9 Ապրիլ 1974, էջ 2:
- Լիբանանահայ Համալսարանականներու Միացեալ Մարմին, «Հաղորդագրութիւն Թիւ 1», «Չարթօնք», 11 Ապրիլ 1974, էջ 1:
- «Հայ Սփիւռք», «Չարթօնք», 12 Ապրիլ 1974, էջ 4:
- «Լիբանանահայ Համալսարանականներու Միացեալ Մարմին», «Հաղորդագրութիւն Թիւ 2», «Չարթօնք», 18 Ապրիլ 1974, էջ 1:
- «Արդարութեան Ճանապարհին - «Լիբանանեան Հանրապետական Կուսակցութեան» Մամլոյ Ասուլիսը. Հայերը, Լիբանան եւ Ապրիլ 24», եւ «Լիբանանահայ Համալսարանականներու Միացեալ Մարմին, «Հաղորդագրութիւն Թիւ 3», «Չարթօնք», 19 Ապրիլ 1974, էջ 1:
- Լիբանանահայ Համալսարանականներու Միացեալ Մարմին, «Հաղորդագրութիւն Թիւ 4», «Չարթօնք», 20 Ապրիլ 1974, էջ 1:
- «Լիբանանի Հանրապետական Կուսակցութեան Մամլոյ Ասուլիսը Լիբանանահայերու, Ապրիլ 24ի Եւ Հայկական Դատին Մասին», «Չարթօնք», 20, 21, 23 եւ 24 Ապրիլ 1974, էջ 2, 3 եւ 4:
- «Մեծ Եղեռնի 59րդ Տարեդարձի Նախօրեակին Բողոքի Տպաւորիչ Երթ Թրքական Դեսպանատան Վրայ - 5000Է Աւելի Հայ Ուսանողներ Եւ Երիտասարդներ Կը Մասնակցին Բողոքի Այս Ցոյցին» եւ Լիբանանահայ Համալսարանականներու Միացեալ Մարմին, «Հաղորդագրութիւն Թիւ 5», «Չարթօնք», 23 Ապրիլ 1974, էջ 1:
- Լիբանանահայ Համալսարանականներու Միացեալ Մարմին, «Հաղորդագրութիւն Թիւ 6, եւ «Լիբանանահայ Համալսարանականներու Միացեալ Մարմնի Մամլոյ Ասուլիսը», «Չարթօնք», 24 Ապրիլ 1974, էջ 1:
- «Լիբանանահայ Երիտասարդութիւնը Խոր Ակնածանքով Եւ Մեծ Միթինկով Յարգեց Մեծ Եղեռնի Նահատակաց Յիշատակը», Լիբանանահայ Համալսարանականներու Միացեալ Մարմին, «Հաղորդագրութիւն Թիւ 7», Լիբանանահայ Համալսարանականներու Միացեալ Մարմին, «Յուշագիր Մ. Ա. Կ.ի Ընդի(անուր) Զարտուղարին», Թուրքիոյ Զիւրտ Յեղափոխական Տեմոքրաթ Կուսակցութիւն, «Կոչ Հայ Նահատակներու Ոգեկոչման Օրուան Առթիւ» եւ «Ապրիլ 24ի Տարեդարձը», «Չարթօնք», 26 Ապրիլ 1974, էջ 1, 3 եւ 4:

- «Երիտասարդներու Խօսքը Ապրիլ 24ի Առթիւ...», «Չարթօսք», 27 եւ 28 Ապրիլ 1974, էջ 3:
- Սարգիս Տէր Եղիայեան, «Ապրիլեան Ուղիներով...», «Չարթօսք», 27 Ապրիլ 1974, էջ 3:
- Երէց Մը, «Ապրիլ 24ի Առիթով - Ապրիլ՝ Երիտասարդներ...», «Չարթօսք», 3 Մայիս 1974, էջ 2:
- Լիբանանահայ Համալսարանականներու Միացեալ Մարմին, «Հաղորդագրութիւն Թիւ 8», «Չարթօսք», 4 Մայիս 1974, էջ 3:
- Լիբանանահայ Համալսարանականներու Միացեալ Մարմին, «Հաղորդագրութիւն Թիւ 9», «Չարթօսք», 7 Մայիս 1974, էջ 1:
- « «Էսոչիէթըտ Փրէս»ի Համաձայն՝ Կարգ Մը Ամերիկահայեր Լոս Անճելըսի Մէջ Թուրքիոյ Դէմ Յոյց Ըրին», «Չարթօսք», 8 Մայիս 1974, էջ 4:
- « «Արմենիա Փողոց» Պուէնոս Այրէսի Մէջ» եւ Ալ(եքսանտր) Սարուխան, «Մեծ Եղեռնը Կը Շարունակուի... Մ. Ա. Կ.ի մէջ - J'accuse», «Չարթօսք», 11 Մայիս 1974, էջ 2:
- Տիգրան Պոյաճեան, «Բաց Նամակ Մ. Ա. Կ.ի Մօտ Մ(իացեալ) Նահանգներու Դեսպան Պր. Ֆիլիփ Է. Հոֆմանին», «Չարթօսք», 14 Մայիս 1974, էջ 2:
- «Ապրիլեան Եղեռնի Ոգեկոչումը Մոնթեպելլոյի Յուշարձանին Առջեւ», «Չարթօսք», 23 Մայիս 1974, էջ 2:
- Գր(իգոր) Գըլճեան, «Ինքնատիպ Յայտագրով Եղեռնի Յուշատօն Մոնթեալի Մէջ», «Չարթօսք», 25 Մայիս 1974, էջ 2:
- Հայ Ազգային Խորհուրդ, «Ամմարդկայնութիւնը՝ Մ. Ա. Կ.ի Մարդկային Իրաւանց Յանձնաժողովին Մէջ» եւ Թղթակից, «Ֆրանսայի Նախագահութեան Երեք Գլխաւոր Թեկնածուներուն Այցը Ապրիլեան Եղեռնի Յուշարձանին», «Չարթօսք», 29 Մայիս 1974, էջ 2:
- Ֆիլիփ Է. Հոֆմըն, «Մ. Ա. Կ.ի Ամերիկեան Պատուիրակը Կը Պատասխանէ Տիգրան Պոյաճեանին», «Չարթօսք», 2 Յունիս 1974, էջ 2:
- «Թրքական Ծանուցագիր Լիբանանի... - Թրքական Իշխանութիւնները Ստահոգ Հայկական Զարոգչութենէն» եւ Մելիք Խաչոյեան, «Բաց Նամակ Առ Որ Անկ Է - 12 000Էն Միայն 7 Շունչ Ազատած...», «Չարթօսք», 4 Յունիս 1974, էջ 2:
- Ոսկան Յովհաննէսեան, «Հայապահպանումն» Ինչպէ՞ս Կ'ընթանայ Թուրքիոյ Մէջ», «Չարթօսք», 5 Յունիս 1974, էջ 3:
- Յակոբ Պօղոսեան, «Չարթօսք»ի Տեսակցութիւնները - Աշոտ Մալաքեան (Հանրի Վերնէյ) Իր Կեանքին Եւ Ասպարեզին Մասին», «Չարթօսք», 6, 7 եւ 8 Յունիս 1974, էջ 2 եւ 3:
- «Երեսփոխաններ Տենիդլսըն Եւ Քոչ Կը Խօսին Քանկրէսին Մէջ՝ Ապրիլ 24ի Մասին», «Չարթօսք», 7 Յունիս 1974, էջ 3:
- «Նոր Օր», «Ռամկավար Ազատական Մամուլ - Գործը Եւ Արդիւնքը», «Չարթօսք», 8 Յունիս 1974, էջ 3:
- «Բողոքագիր...», «Չարթօսք», 9 Յունիս 1974, էջ 2:

- «Եւրոպայի Հայ Ուսանողական Միութեան Յայտարարութիւնը», «Չարթօնք», 14 Յունիս 1974, էջ 2:
- Լեւոն Վարդան (Պետիրեան), «Երգիծանք - Թուրք Պատմագրութիւն...», «Չարթօնք», 19 Յունիս 1974, էջ 3:
- «Կիպրոսի Կառավարութեան Հայանպաստ Վարքագիծը», «Չարթօնք», 16 Յունիս 1974, էջ 2:
- «Ընդվզեցուցիչ Միջոցառում Ֆրանսահայութեան Դէմ», «Չարթօնք», 21 Յունիս 1974, էջ 1:
- «Մ. Ա. Կ.ի Մարդկային Իրաւանց Յանձնախումբի Ցեղասպանութեան Տեղեկագրի 50րդ Պարբերութեան Պահպանման Հարցը Գաղութ Գաղութ», «Չարթօնք», 25 Յունիս 1974, էջ 3:
- Ֆրանսահայութեան Տագնապը - Գործնական Զայլեր Բեկանել Տալու Համար Ստիպողական Ատեանին Վճիռը - Ֆրանսահայ Երիտասարդութիւնը Կը Պահանջէ Վահէ Թոսունեանի Վտարումը Հայութեան Ծոցէն» եւ Կրօնական Ընկերակցութիւն Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ, Փարիզի եւ Շրջակայից Վարչութիւն «Փարիզեան Շրջանի Ազգային-Եկեղեցական Տագնապը (Հաղորդագրութիւն)», «Չարթօնք», 27 Յունիս 1974, էջ 1 եւ 2:
- Թղթակից, «Յուզումի եւ Ընդվզումի Օրեր Փարիզահայութեան Համար», «Չարթօնք», 6, 7, 9 եւ 10 Յունիս 1974, էջ 2:
- «Ամերիկայի Հայերը Թուրքիոյ Դէմ Նոր Պայքարի Մը Ձեռնարկեցին», «Չարթօնք», 20 Յունիս, 1974, էջ 3:
- Ն. Թ. (Նազարէթ Թօփալեան), «Լիբանանեան Զրոնիկ - Թշնամիներ Շահելու Արուեստը...», «Չարթօնք», 22 Յունիս 1974, էջ 1:
- Անդրանիկ Անդրեասեան, «Ամերիկայի Հայերը եւ Սեւամորթները», «Չարթօնք», 24 Յունիս 1974, էջ 2:
- «Նայիրի», «Հաստատումներ - Փանջունիս... Ի Թեհրան», «Չարթօնք», 4 Օգոստոս 1974, էջ 2:
- «Բողոք Մ. Ա. Կ.ի Մարդկային Իրաւանց Յանձնաժողովին Մօտ» եւ Լիբանանահայ Համալսարանականներու Միացեալ Մարմին, «Հաղորդագրութիւն Թիւ 10», «Չարթօնք», 11 Օգոստոս 1974, էջ 1:
- «Որպէսզի 20րդ Դարու Առաջին Ցեղասպանութիւնը Երբեք Չմոռցուի», «Չարթօնք», 15 Օգոստոս 1974, էջ 1:
- Լիբանանահայ Համալսարանականներու Միացեալ Մարմին, «Հաղորդագրութիւն Թիւ 11», «Չարթօնք», 21 Օգոստոս 1974, էջ 4:
- Հայկ Մսրըլեան, «Թրքական Յարձակում», «Չարթօնք», 27 Օգոստոս 1974, էջ 3:
- «Նայիրի», «Թզուկի Պատմութիւններ...», «Չարթօնք», 27 եւ 28 Օգոստոս 1974, էջ 2 եւ 3:
- «Ուսանողական Յուշագիրներ Թուրքիոյ Դեսպանին եւ Մ. Ա. Կ.ի Ընդհանուր Զարտուղարին», «Չարթօնք», 28 Օգոստոս 1974, էջ 3 եւ 4:

- «Պայքար», «Ցեղասպանության Չարցը Մ. Ա. Կ.ի Առջեւ - Մասնաւոր Չեկուցաբերը... Առանց Պատճառի Կը Բացակայի Մ. Ա. Կ.ի Ենթայանձնախումբի Ժողովէն», «Չարթօնք», 3 Սեպտեմբեր 1974, էջ 2:
- «Պայքար», «Ատենն Է...», «Չարթօնք», 4 Սեպտեմբեր 1974, էջ 2:
- Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդր(ոնական) Վարչութիւն, Զ. Յ. Դաշնակցութեան Բիւրօ, Ս. Դ. Զնչակեան Կուսակցութեան Կեդր(ոնական) Վարչութիւն, «Կոչ Զայ Ժողովուրդին», «Չարթօնք», 14 Սեպտեմբեր 1974, էջ 1:
- 2. (Յակոբ Աւետիքեան), «Ախորժակը Երբեմն Չուտելով Ալ Կը Բացուի... «Մեծն Բիւրտիստան», «Չարթօնք», 25 Սեպտեմբեր 1974, էջ 2:
- Թղթակից, «Լոնտոնահայ Կեանք», Չարթօնք», 28 Սեպտեմբեր 1974, էջ 3:
- «Խմբագրական - Միասնական Ճիգերով...», «Չարթօնք», 29 Սեպտեմբեր 1974, էջ 2:
- «Մեծ Եղեռնի Պատմութիւնը՝ 10 000 Տպաքանակով», «Չարթօնք», 10 Յոկտեմբեր 1974, էջ 3:
- Վ. Կեսարացի (Վահան Էլմասեան), «Օրակարգի Զրատապ Զարցեր - Զայկական Ցեղասպանութեան Վկայաթուղթերը», «Չարթօնք», 16 Յոկտեմբեր 1974, էջ 3:
- «Պայքար», «Ռամկավար Ազատական Մամուլ - Ազգային Ոգեկոչման Պահանջը», «Չարթօնք», 23 Յոկտեմբեր 1974, էջ 2:
- «Ոգեկոչելու Զամար Ապրիլ 24ը՝ Զայկական Զամախմբումը Թիկունք Կը Կանգնի Զելսթուլսքի Առաջարկին» եւ Թղթակից, «Ռ. Ա. Կ. - Դասախօսութիւններ - «Չօր. Անդրանիկ Կը Խօսի», «Չարթօնք», 24 Նոյեմբեր 1974, էջ 2:
- Լիբանանահայ Զամալսարանականներու Միացեալ Մարմին, «Զաղորդագրութիւն Թիւ 12», «Չարթօնք», 26 Նոյեմբեր 1974, էջ 1:
- Խմբ(ագրական) «Նոր Օր»ի, «Ռամկավար Ազատական Մամուլ - Կուսակցութեանց Կոչը եւ Նպատակը», «Չարթօնք», 4 Դեկտեմբեր 1974, էջ 2:
- Գրիգոր Կիրակոսեան, «Անդրանիկ», «Չարթօնք», 7, 8, 9, 10, 11, 13 եւ 14 Դեկտեմբեր 1974, էջ 2 եւ 3:
- Լիբանանահայ Զամալսարանականներու Միացեալ Մարմին, «Զաղորդագրութիւն», «Չարթօնք», 10 Դեկտեմբեր 1974, էջ 3:
- Անդրանիկ Անդրեասեան, «Մենք Երիտասարդներս...», «Չարթօնք», 15 Դեկտեմբեր 1974, էջ 2:
- Յ. Վարժապետեան, «Գրիգորիս Եպս. Պալաքեան - Իր Մահուան Զառասուճամեակին Առթիւ», «Չարթօնք», 19 Դեկտեմբեր 1974, էջ 2 եւ 4:
- «Մեծ Եղեռնի 60-ամեակի Ոգեկոչման Զամազգային Կեդր. Մարմին», «Զաղորդագրութիւն», «Չարթօնք», 16 Յունուար 1975, էջ 1:
- Մեծ Եղեռնի Վաթուճամեակի Ոգեկոչման Լիբանանի Զամազգային Մարմին, «Յայտարարութիւն» եւ «Զաղորդագրութիւն Թիւ 1», «Չարթօնք», 21 Յունուար 1975, էջ 1:
- «Զայկական Նոր Ֆիլմ Մը՝ «Սասունի Չաւակները», «Չարթօնք», 22 Յունուար 1975, էջ 3:

- Անդրանիկ Անդրեասեան, «Բայց Ո՞ր Յեղափոխութիւնը», «Չարթօնք», 29 Յունուար 1975, էջ 2:
- Յակոբ Թորոսեան, «Վաթսունամեակի Սեմին», «Չարթօնք», 2 Փետրուար 1975Էն յօդուածաշարք, որ կ'աւարտի թերթին 1 Մարտ 1975ի թիւով:
- «Սասունի Չաւակները» Ֆիլմին Նկարահանումը Աւարտած Է», «Չարթօնք», 13 Փետրուար 1975, էջ 3:
- Եղեռնի 60-ամեակի Ոգեկոչման Համագգային Կեդրոնական Մարմին, «Հաղորդագրութիւն Թիւ 2», «Չարթօնք», 20 Փետրուար 1975, էջ 1:
- «Խմբագրական - Նշմարներ - Պետք Է Վար Առնել Անխոհեմութեան Դիմակները», «Չարթօնք», 23 Փետրուար 1975, էջ 1:
- Մեծ Եղեռնի Վաթսունամեակի Ոգեկոչման Լիբանանի Համագգային Մարմին, «Կոչ Լիբանանի Հայութեան», «Չարթօնք», 25 Փետրուար 1975, էջ 1:
- Մեծ Եղեռնի 60-ամեակի Ոգեկոչման Լիբանանի Համագգային Մարմին, «Հաղորդագրութիւն Թիւ 2», նաեւ «Յայտարարութիւն» եւ «Մրցանք», «Չարթօնք», 26 Փետրուար 1975, էջ 3:
- «Սասունի Չաւակները» Պիտի Յուցադրուի Ի Նպաստ Եղեռնի 60-ամեակի Ձեռնարկներուն», «Չարթօնք», 27 Փետրուար 1975, էջ 3:
- Կ(արպիս) Զրբաշեան, «Մամուլ («Նայիրի») - Հայ Դատի Խաչակիրներից...», «Չարթօնք», 1 Մարտ 1975, էջ 2:
- «Պայքար», «Ամերիկայի եւ Բնատայի Շրջան - Լուսաբանութիւններ Մեծ Եղեռնի 60-ամեակի Սեմին», «Չարթօնք», 5, 6, 7, 8 եւ 14, 15, 16 Մարտ 1975, էջ 2:
- «Ամերիկածին Հայ Երիտասարդի Մը Սրտագրաւ Վկայութիւնը Թէ Ինչպէս «Հայացուց»... Ճէյմս Տէր Կարապետեան», «Չարթօնք», 6 Մարտ 1975, էջ 2:
- «Խմբագրական - Շրջահայեաց եւ Իրատես Ընթացք (Մեծ Եղեռնի Վաթսունամեակի Ոգեկոչման Առթիւ)», «Չարթօնք», 6 եւ 7 Մարտ 1975, էջ 2:
- Ա. Ե. (Խաւանաբար Աւետիս Եսփուճեան), «Վաթսունամեակի Սեմին Այժմեական եւ Անիրաժէշտ Իրագործում», «Չարթօնք», 11 Մարտ 1975, էջ 2:
- Արա Արծրունի, «Պատրաստուի՛նք», «Չարթօնք», 12 Մարտ 1975, էջ 4:
- «Ամերիկահայ Նամականի - 60-ամեակի Ոգեկոչում եւ Հայկական Դատ», «Չարթօնք», 22 Մարտ 1975, էջ 3 եւ 4:
- Վարդուի Բէշիշեան, «Լիբանանահայ Թատրոն - «Սողոմոն Թեւիլիբեանի Դատավարութիւնը» - Հերոսի Կերպարի Աղաւաղումը», «Չարթօնք», 3 Ապրիլ 1975, էջ 3:
- Մեծ Եղեռնի 60-ամեակի Ոգեկոչման Լիբանանի Համագգային Մարմին, «Հաղորդագրութիւն Թիւ 4», «Չարթօնք», 10 Ապրիլ 1975, էջ 4:
- «Չարթօնք»ի Խմբագրութիւն, «Բաց Նամակ Միացեալ Նահանգներու Նախագահ Ճերըլտ Ֆորտին», «Ամերիկայի Ներկայացուցիչներու Տունը Կը Զուեարկէ «Ապրիլ 24ը Յեղասպանութեան Չոհերուն Ի Յարգանս Ազգային Օր» Հռչակող Բանաձեւի Ծրագիրը», «Մեծ Եղեռնի 60-ամեակի Ոգեկոչում - Ճաշկերոյթ Ի Պատիւ Լիբանանի Մամուլի Խմբագիրներուն» եւ «Ի Բերանոյ Զումմէ - «Մեր Մասին Թող Հարցնեն Հայերուն», «Չարթօնք», 11 Ապրիլ 1975, էջ 1, 2 եւ 4:

- «Խմբագրական - Ամբողջական Մասնակցութեամբ» եւ «Լիբանանի Համայնավար Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէ, «Յայտարարութիւն Լիբանանի Համայնավար Կուսակցութեան՝ Հայ Ժողովուրդի Ցեղասպանութեան Վաթսունամեակին Առիթով», «Չարթունք», 13 Ապրիլ 1975, էջ 1 եւ 2:
- «Մեծ Եղեռնի Վաթսունամեակի Ոգեկոչման Լիբանանի Համագգային Մարմին Կազմակերպութեամբ Այցելութիւն՝ Լիբանանցի Նահատակներու Գերեզմանատուներ», «Չարթունք», 15 Ապրիլ 1975, էջ 1:
- «Նախագահ Ֆորտ Կը Խոստանայ Ուսումնասիրել Հելսթոսքիի Բանաձեւը» եւ «Ցեղասպան Թուրքը Կը Յանդգնի Ամերիկացիներուն Դաս Տալ...», «Չարթունք», 19 Ապրիլ 1975, էջ 2:
- «Ամերիկեան Դիւանագիտական Կարծիք Մը 1915ի Զարդերուն Մասին», «Չարթունք», 29 Ապրիլ 1975, էջ 2:
- Եղեռնի Վաթսունամեակի Ոգեկոչման Համագգային Կեդրոնական Մարմին, «Հայկական Յուշագիր Միացեալ Ազգերու Կազմակերպութեան» եւ «Յուշագիր Թուրքիոյ Հանրապետութեան Նախագահին», «Չարթունք», 24 Ապրիլ 1975, էջ 1 եւ 2:
- «Խմբագրական - Հպարտառիթ Երեւոյթը» եւ «Դեպի Ծիծեռնակաբերդի Կոթող-Յուշարձանը», «Չարթունք», 9 Մայիս 1975, էջ 1:
